է ։ Եւ մսագործի եթէ պախրէի լինի գլուխ եթէ ոչխարի զկէսն տա կէսն ազատ է ։ Եւ 'ի Նստ ո ին կարլէն ո դրամն ազատ է ․

Նոր գիսաւորք .

Միլանու աստեղադիտարանէն Պ․ Րէսբիկի հետեւեալ ծանօթութիւնքը կը հաղորդէ՝ իր արգէն յուլիսի 4ին յայտնած գիսաւորին վրայ․ որ զգալապէս երկրիս մօտենալով՝ տրամագծին և լուսոյն աճումը օրէ օր պիտի պայծառանայ ։ Քանի մը օրէն առանց գործեաց օգնութեան ալ պիտի տեսնուի երրորդ և չորրորդ կարգի մեծութեամբ աստեղաց, Բազմաստեղաց և Եզող համաստեղութեան մէջ ։ Գրեթէ երկու աստիճան երկայնութեամբ կը ձգուի ագին հակառակ արեւու ։ Պրերայի դիտարանը կը ծանուցանէ և կը հետեւցընէ մինչև ցայսօր ըրած հաշիւներէն որ օգոստոսի 8ին երկրիս մերձաւոր կէտը պիտի գտնուի, ինը միլիոն մղոն հեռաւորութեամբ ։ Նոյն օրը պիտի ըծորդի արեգական հետ և արագընթաց բոլորմամբ աւելի անոր պիտի մօտենայ՝ հինգ օրուան մէջ երեք երկայնութեան նշան հատանելով ։ Արեգական միւս կողմն անցնելով՝ առաջ որ միայն առաւօտեան դէմ տեսանելի էր, պիտի տեսնուի երեկոյեան վերջալուսոյն նուազմանը միջոց, մինչև ց10 օգոստոսի․ 15ին արեգական մերձաւոր կէտը պիտի գտնուի, և անտարակոյս ենք որ նոյն ժամանակ իր պայծառութիւնն ու աճումը զգալի պիտի առաւելու ։ Այսպէս շատ մը եօթնեակներ գիշերները արեւմտեան կողմը պիտի տեսնուի, և նոյն միջոցին՝ օգոստոսի վերջին տասներորդ մասը և ամբողջ սեպտեմբեր ամիսը, պիտի անցնի ուղիղ ընթացքով՝ զոդիակոսի Առիւծ, Կոյս և Կշիռ համաստեղութիւնքը, ըծորդելով դարձեալ արեգական հետ հոկտեմբերի վերջին օրերը ։

Գիսաւորիս պարունակը՝ երկրիս պարունակին շատ մերձաւոր է, անանկ որ սեպտեմբերի 12ին միջոցները գրեթէ եօթն հարիւր հազար մղոն հեռու պիտի մնայ երկրիս յունիսի 13ին իր պարունակին մէջ գտնուած կէտէն ։ Եթէ ըստ դիպաց երկիրս դանդաղելով երեք ամիս՝ նոյն կէտը գտնուելու ըլլար, և կամ գիսաւորը երեք ամիս կանխելու ըլլար, շատ մեծ և ահեղ պիտի տեսնայինք զինքը և զերկիրս իր ագիին մէջը պիտի ընկղմէր ։

Ուրիշ փոքրիկ գիսաւոր մ՚ալ տեսանելի է այս միջոցներս արեւմտեան հորիզոնին վրայ․ զոր աղէկ դիտակներով ալ անկարելի է նշմարելը, ուստի այն պատճառաւ առ այժմ դժուարին է իր ապագային գուշակումը ։

Վիճակագրական .

Ըստ նորագոյն վիճակագրական գեղեցիկ ու ճշգրիտ հաշուի, զոր հրատարակեր է Գոգըր անգլիացի գիտնականը, Անգլիոյ բնակչաց թիւն է 30 միլիոն ։ Ի բաց առեալ Պելճիա, չկայ աշխարհք մը Եւրոպիոյ մէջ այսչափ բազմամարդ համեմատութեամբ երկրին ընդարձակութեանը ։ Ամեն երկու վայրկենին Անգլիա երեք զաւակ կը ծնանի, և ամեն մէկ վայրկենին մէկ զաւակ կը թաղէ ։ Մեծն Բրիտանիայէ ազատ գաղթողներն են հինգ Իռլանտացիք առ մէկ Անգլիացի, երեք Իռլանտացիք առ մէկ Սկովտացի ։ Կանանց թիւը 500000 աւելի է քան էրիկ մարդկանցն, որով կանանց թիւը կը համեմատի էրիկ մարդկանց թուոյն, ինչպէս 105 առ 100 ։ Անգլիոյ բնակչաց շարունակ աճման կենդանի օրինակ մըն է Պըրքէնհէտ ըսուած քաղաքը, որ յամին 1801 գիւղ մըն էր հարիւր մէկ բնակչօք, իսկ հիմա քաղաք մըն է 51539 բնակչօք ։ Լոնտրայի հիմակուան բնակչաց թիւը շատ հաւանականութեամբ հաւասար է ԺԴ դարուն բոլոր Անգլիայի բնակչաց թուոյն ։ Ամեն վեց վայրկենին այս ծովացեալ քաղաքս մէկ զաւակ կը ծնանի, և ամեն ութ վայրկենին՝ մէկ զաւակ կը թաղէ ։ Եթէ Լոնտրայի բնակչաց թիւն այս համեմատութեամբ շարունակէ աճելու, յամին 1963 տասներկու միլիոն բնակիչ պիտի ունենայ ։ Լոնտրայի բնակչաց թիւն հինգ անգամ աւելի է